ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2018Թ. ՀՈՒՆԻՍԻ 20-ԻՑ 22-Ը ԲԵԼԳԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ (ԲՐՅՈՒՍԵԼ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**
   Հակոբ Վարդանյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**
   Բելգիայի Թագավորություն (ք. Բրյուսել), 2018թ. հունիսի 20-22-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   Եվրոպական հանձնաժողով

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**
   Մասնակցել ՀՀ-ԵՄ Գործընկերության խորհրդի անդրանիկ նիստին

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**
   Քննարկվեցին ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի իրականացմանն ուղղված գործողությունները, ինչպես նաև տարածաշրջանին վերաբերող արտաքին քաղաքական խնդիրները: Մասնավորապես էներգետիկային վերաբերվող թեմայի ընթացքում ներկայացվեց վերջին տարիներին Հայաստանի կատարած բարեփոխումները էներգետիկ համակարգում: Ներկայացվեց էներգաարդյունավետության, էներգախնայողության, վերականգնվող էներգետիկայի և շուկայի ազատականացմանն ուղղված կատարված և կատարվելիք գործողությունները:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**
   Հանդիպումներ տեղի ունեցան Եվրամիության բարձր հանձնակատար Ֆեդերիկա Մոգերինիի և նրա գլխավորած աշխատանքային խմբի անդամների հետ: Ես ներկայացրեցի առաջիկա տարիների ՀՀ էներգետիկ համակարգի առաջնահերթությունները և մեր համակարգում կատարվելիք գործողություններն՝ ուղղված Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական Միություն համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի պահանջներին, ինչպես նաև ընդգծեցի Եվրամիության օժանդակության կարևորությունը մեր երկրի համար:

8. **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**
   Հանդիպումների ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց մշակել Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով նախատեսված պարտավորությունների իրականացման ճանապարհային քարտեզ:

9. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Եվրամիության օժանդակությամբ ներգրավել միջազգային փորձագետներ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով նախատեսված պարտավորությունները պատշաճ և ժամանակին իրականացնելու համար: Այդ պարտավորությունները բարեհաջող իրականացնելուց հետո մասնավորապես էներգետիկայի ոլորտում մենք կունենանք ավելի հուսալի և էներգախնայող համակարգ՝ հիմնված վերականգնվող էներգետիկայի վրա, ինչն էլ իր հերթին կբարձրացնի էներգետիկ անվտանգությունը:

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՀԱԿՈԲ ՎԱՐԴԱՆՅԱՆ

06.08.2018